

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԹՈՐՈՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՃԱՌՅԱՆԻ
(1891—1976)

1976 թվականի հունվարի 30-ին Երևանի իր բնակարանում, 85 տարեկան հասակում, վախճանվեց ս. Հովհաննես եկեղեցու տ. Թորոս ավագ քհն. Մաճառյանը:

Հանգուցյալը ծնվել է 1891 թվականին Թուրքիայի Դյորտ-Յոլ քաղաքում, արհեստավորի ընտանիքում: Հաճախել է տեղի Մամիկոնյան վարժարանը և միևնույն ժամանակ մասնակցել ս. Աստվածածին եկեղեցու արարողություններին:

1914—1918 թվականներին ընտանիքով աքսորվել է Հալեպ քաղաքի շրջան: Տարագրությունից վերադառնալով իր ծննդավայր, գործոն մասնակցություն է բերել Դյորտ-Յոլի ինքնապաշտպանությանը:

1922 թվականին ընտանիքով տեղափոխվել է Լիբանան և հաստատվել Բեյրութում:

1927 թվականին Մեծի Տանն Կիլիկիո Տ. Սահակ Բ Խապայան կաթողիկոսից ձեռնադրվել է քահանա և քահանայագործել Բեյրութի ս. Խաչ և ապա Նոր Հաճն թաղի ս. Գևորգ եկեղեցիներում, մինչև 1947 թվականը, որից հետո ընտանիքով տեղափոխվել է մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան:

1950 թվականից սկսած քահանայագործել է Երևանի ս. Հովհաննես եկեղեցում, մինչև իր կյանքի վերջը:

Իր եկեղեցանվեր աշխատանքների համար 1956 թվականին տեր հայրը Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի կողմից պարգևատրվել է քահանայական լանջախաչով, իսկ 1957-ին Նորին Սրբության կողմից արժանացել ավագ քահանայության պատվի:

Սույն թվականի փետրվարի 1-ին հանգուցյալ տ. Թորոս ավագ քահանայի վերջին օծումն ու թաղման կարգն է կատարվում ս. Հովհաննես եկեղեցում՝ նախագահությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխա-

նորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի, մասնակցությամբ քահանայից դասի, եկեղեցական խորհրդի անդամների և հաւատացյալների բազմության:

Հանգուցյալի կյանքի և եկեղեցական գործունեության մասին դամբանական է խոսում առաջնորդական փոխանորդ սրբազան հայրը՝ վեր հանելով տ. Թորոս ավագ քահանայի ծառայության արժանիքները, որպես հավատավոր ու հայրենանվեր եկեղեցականի, որն իր կյանքը նվիրել է ի պայծառություն եկեղեցու և իր ժողովրդի հոգևոր սպասի:

Հանգիստ տ. Թորոս ավագ քահանայի ոսկորներին: